

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»

կուսակցության 3-րդ (արտահերթ)  
համագումարի 2007թ. փետրվարի 15-ի  
որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
ԿՈՂՄԻՑ «18».06.2004թ.  
գրանցման թիվ 211.172.02701  
վկայական 03 Ա 065165

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»

կուսակցության նախագահ

Թիվ \_\_\_\_\_ '\_\_\_\_' \_\_\_\_\_ փոփոխությունը  
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի կենտրոնական  
մարմնի կողմից

" \_\_\_\_\_ " \_\_\_\_\_ 2007թ.

----- Գագիկ Ծառուկյան

ՀՀ պետական ռեգիստրի ղեկավար

----- Մ. Մարտիրոսյան

**«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ»  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

(Նոր խմբագրություն)

**ԵՐԵՎԱՆ 2007**  
**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՎԵՐ**

1.1 «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը սույն կանոնադրության և կուսակցության ծրագրային դրույթներն ընդունող անձանց անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է (այսուհետ՝ Կուսակցություն):

1.2 Կուսակցությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կանոնադրության և իրավական այլ ակտերի, ինչպես նաև իր ծրագրի հիման վրա:

1.3 Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից Կուսակցությունը հանդիսանում է իրավաբանական անձ, օգտվում է իրավաբանական անձի կարգավիճակից բխող, ինչպես նաև օրենքով սահմանված իրավունքներից և կրում համապատասխան պարտականություններ:

1.4 Կուսակցության անվանումն է՝

ա) հայերեն՝ «Բարգավաճ Հայաստան» Կուսակցություն (հապավումը՝ ԲՀԿ),

բ) ռուսերեն՝ Партия «Прогрессивная Армения» (հապավումը՝ ППА),

գ) անգլերեն՝ «Prosperous Armenia» Party (հապավումը՝ PAP):

1.5 Կուսակցությունն ունի իր խորհրդանշանը: Այն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դրոշի եռագույնի յուրաքանչյուր գույնին համապատասխան հայերեն «Բ» և «Հ» տառերի ու կորագծի ուռուցիկ ձգվող համադրություն, որի տակ գրված է «Միասին կառուցենք բարգավաճ երկիր» կարգախոսը:

Կուսակցության խորհրդանշանի նկարագրության գունավոր պատկերը ներկայացվում է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս կազմող թիվ 1 հավելվածում:

1.6 Կուսակցությունն ունի իր դրոշը, որն իրենից ներկայացնում է լայնության և երկարության չափերի 1:2-ի հարաբերակցությամբ, կենտրոնում՝ Կուսակցության անվանումով և Կուսակցության խորհրդանշանի պատկերով սպիտակ պաստառ:

Կուսակցության դրոշի նկարագրության գունավոր պատկերը ներկայացվում է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս կազմող թիվ 2 հավելվածում:

1.7 Կուսակցությունն ունի իր անվանումով, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով և խորհրդանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Թումանյան 21:

## **2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1. Կուսակցության գործունեության նպատակը հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցությունն է:

2.2. Իր նպատակին հասնելու ճանապարհին Կուսակցությունն առաջնային է համարում հետևյալ հիմնական խնդրիների լուծումը՝

ա) ժողովրդավարական ընտրությունների միջոցով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում իր ներկայացուցչության ապահովումը և այդ ճանապարհով պետական իշխանության մարմինների ձևավորմանը, պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակցելը,

բ) մարդու կողմից իր իրավունքների և ազատությունների լիարժեք իրականացմանն աջակցելը,

գ) իրավական պետության կայացմանը նպաստելը,

դ) սոցիալական արդարության համակարգի ձևավորմանն աջակցելը,

ե) ներքաղաքական կյանքի կայունությանը նպաստելը,

զ) երկրի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրական բաժանման և դրանց միջև արդյունավետ հավասարակշռման գործընթացին օժանդակելը:

### **3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

3.1 Իր գործունեության ընթացքում Կուսակցությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական սկզբունքներով՝

ա) անդամության կամավորություն և իրավահավասարություն,

բ) օրինականություն և արդարություն,

գ) ինքնակառավարում և գործունեության հրապարակայնություն,

դ) օբյեկտիվություն և իրատեսություն,

ե) փոխադարձ հանդուրժողականություն,

զ) գաղափարական նույն հիմքի վրա այլ կուսակցությունների և հասարակական միավորումների հետ կառուցողական համագործակցություն,

է) հասարակական և պետական շահերի գերակայություն:

3.2 Իր գաղափարների տարածման և ծրագրային խնդիրների իրականացման համար Կուսակցությունն ընդունելի է համարում գործունեության հետևյալ մեթոդների և ձևերի կիրառումը՝

ա) Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, ներկայացուցչությունների ստեղծում,

բ) հանրաքվեներին (այդ թվում՝ տեղական) ակտիվ մասնակցություն,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների հիմնադրում,

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զանգվածային լրատվության և օրենքով չարգելված այլ միջոցներով Կուսակցության գաղափարների ու տեսակետների տարածում, իր նպատակների ու խնդիրների քարոզում,

ե) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին հասարակության կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնությունների և առաջարկությունների ներկայացում,

զ) օրենքով սահմանված դեպքերում և կարգով ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծում կամ այդպիսի կազմակերպությունների մասնակցություն,

է) խաղաղ, առանց զենքի հավաքների, այլ հասարակական-քաղաքական միջոցառումների կազմակերպում, անցկացում և (կամ) դրանց մասնակցություն,

ը) առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ դաշինքների և միավորումների (այդ թվում՝ ընտրական) ստեղծում կամ դրանց մասնակցություն,

թ) օտարերկրյա կուսակցությունների և միավորումների հետ միջազգային կապերի ու շփումների հաստատում և պահպանում, միջազգային միություններին ու ասոցիացիաներին անդամակցություն:

#### **4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

4.1 Կուսակցության ղեկավար մարմինները, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվում են Կուսակցության համագումարի և (կամ) մշտական գործող ղեկավար մարմնի կողմից և իրականացնում են սույն կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունները:

4.2 Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվում և նրանց գործունեությունը կազմակերպվում է միայն տարածքային հատկանիշով:

4.3 Կուսակցության ղեկավար մարմիններն են՝

ա) Կուսակցության համագումարը,

բ) Կուսակցության նախագահը,

գ) Կուսակցության քաղաքական խորհուրդը:

4.4 Կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են՝

- ա) Կուսակցության տարածքային կազմակերպությունը,
- բ) Կուսակցության համայնքային կազմակերպությունը,
- գ) Կուսակցության սկզբնական կազմակերպությունը:

4.5 Կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

ա) Կուսակցության վերահսկողություն իրականացնող մարմինները (վերստուգիչ խմբեր, վերահսկողական հանձնախմբեր և այլն),

բ) Կուսակցության գործառնության ստորաբաժանումները (հաշվապահություն, հասարակության հետ կապերի բաժին, իրավաբանական ծառայություն, վերլուծական կենտրոն, ՋԼՄ-ների հետ կապերի բաժին և այլն),

գ) Կուսակցության տարածքային ստորաբաժանումների և հասարակական կյանքի առանձին ոլորտներում դրանց գործունեությունը համակարգող մարմինները (Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներում գործող տարածքային ստորաբաժանումների գործունեությունը համակարգող խորհուրդներ, Կուսակցության կանանց խորհուրդ, երիտասարդական խորհուրդ, մտավորականների խորհուրդ, մշակութային խորհուրդ և այլն):

4.6 Կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումները կարող են ստեղծվել (կազմալուծվել) Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կողմից և իրականացնել սույն կանոնադրությամբ և Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կողմից իրենց վերապահված լիազորություններ:

4.7 Կուսակցության ղեկավար մարմինների (բացառությամբ Կուսակցության նախագահի), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների նիստերը (ժողովները) իրավագոր են, եթե դրանց մասնակցում են այդ մարմինների (ստորաբաժանումների) անդամների առնվազն 2/3-ը:

4.8 Կուսակցության ղեկավար մարմինների (բացառությամբ Կուսակցության նախագահի), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կուլեգիալ որոշումներն ընդունվում են նիստի (ժողովի) մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ եթե սույն կանոնադրությամբ կամ Կուսակցության համագումարի որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է նիստի (ժողովի) մասնակիցների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

Որոշումների ընդունման ժամանակ ձայները հավասար բաշխվելու դեպքում Կուսակցության ղեկավար մարմինների (բացառությամբ Կուսակցության նախագահի), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների (նիստերը նախագահողների) ձայնը վճռորոշ է:

## **5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կուսակցության կառուցվածքային հիմքը Կուսակցության սկզբնական կազմակերպություններն են, որոնք ստեղծվում (կազմալուծվում) են Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ Կուսակցության տարածքային կազմակերպությունների առաջարկությամբ, երկու տարի ժամկետով:

5.2 Սկզբնական կազմակերպության անդամների նվազագույն քանակը սահմանում է Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինը:

5.3 Սկզբնական կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ժողովների հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման միջոցով:

5.4 Սկզբնական կազմակերպությունն ընտրում է կազմակերպության ղեկավար և քարտուղար՝ երկու տարի ժամկետով: Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել կողմ ձայներ ստացած թեկնածուն: Սկզբնական կազմակերպության ժողովի որոշմամբ կարող են կատարվել կազմակերպության ղեկավարի և քարտուղարի վաղաժամկետ ընտրություններ:

Սկզբնական կազմակերպության ղեկավարը պատասխանատու է կազմակերպության ընդհանուր գործունեության, իսկ քարտուղարը՝ կազմակերպության գործավարության համար, և անհրաժեշտության դեպքում փոխարինում է կազմակերպության ղեկավարին:

5.5 Սկզբնական կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է կազմակերպության ղեկավարի կողմից՝ առնվազն վեց ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ ժողովը՝ կազմակերպության ղեկավարի կամ անդամների առնվազն 1/3-ի

նախաձեռնությամբ: Սկզբնական կազմակերպության արտահերթ ժողովը հրավիրվում է նախաձեռնողի առաջարկած ժամկետում և օրակարգով:

Սկզբնական կազմակերպության անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ կազմակերպության ղեկավարի կողմից արտահերթ ժողով չհրավիրելու դեպքում նախաձեռնողներն իրավասու են ինքնուրույն հրավիրել արտահերթ ժողովը՝ այդ մասին առնվազն երկու օր առաջ տեղյակ պահելով Կուսակցության անմիջական վերադաս մարմնին:

5.6 Սկզբնական կազմակերպությունը հաշվետու է Կուսակցության վերադաս մարմիններին և գործում է համապատասխան համայնքային կազմակերպության, իսկ դրա բացակայության դեպքում՝ համապատասխան տարածքային կազմակերպության անմիջական ենթակայության տակ:

5.7 Սկզբնական կազմակերպությունը, յուրաքանչյուր տարվա հունվարին, Կուսակցության իր անմիջական վերադաս մարմնի հաստատմանն է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության տարեկան (այդ թվում՝ ֆինանսական) հաշվետվությունը և առաջիկա տարվա գործունեության աշխատանքային ծրագիրը՝ ներառյալ տարեկան ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն և աշխատանքային ծրագիր):

5.8 Սկզբնական կազմակերպությունը՝

ա) իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները,

բ) մասնակցում է Կուսակցության վերադաս մարմինների կազմակերպած միջոցառումներին,

գ) մշտական կապ է պահպանում կազմակերպության գործունեության տարածքի բնակչության հետ,

դ) Կուսակցության վերադաս մարմիններին տեղեկատվություն է տրամադրում կազմակերպության գործունեության տարածքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ և կարող է հանդես գալ առաջարկություններով ու Կուսակցության գործունեությանն առնչվող նախաձեռնություններով,

ե) կատարում է Կուսակցության վերադաս մարմինների հանձնարարականները:



## 6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կուսակցության համայնքային կազմակերպությունները ստեղծվում (կազմալուծվում) են Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ Կուսակցության տարածքային կազմակերպությունների առաջարկությամբ, երկու տարի ժամկետով, և համակարգում են Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքների տարածքում ստեղծված սկզբնական կազմակերպությունների գործունեությունը:

Համայնքային կազմակերպություն կարող է ստեղծվել միայն այն դեպքում, երբ տվյալ համայնքի տարածքում առկա է Կուսակցության առնվազն երկու սկզբնական կազմակերպություն:

6.2 Համայնքային կազմակերպության ղեկավար մարմինը կազմակերպության խորհուրդն է, որի անդամներն ընտրվում են համապատասխան համայնքային կազմակերպության կոնֆերանսի կողմից: Համայնքային կազմակերպության խորհրդի անդամների նվազագույն քանակը սահմանում է Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինը:

6.3 Համայնքային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է խորհրդի նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման միջոցով:

6.4 Համայնքային կազմակերպության խորհուրդն ընտրում է կազմակերպության խորհրդի ղեկավար և քարտուղար՝ երկու տարի ժամկետով: Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել կողմ ձայներ ստացած թեկնածուն: Համայնքային կազմակերպության խորհրդի որոշմամբ կարող են կատարվել կազմակերպության խորհրդի ղեկավարի և քարտուղարի վաղաժամկետ ընտրություններ:

6.5 Համայնքային կազմակերպության խորհրդի ղեկավարը պատասխանատու է կազմակերպության ընդհանուր գործունեության, իսկ քարտուղարը՝

կազմակերպության գործավարության համար, և անհրաժեշտության դեպքում փոխարինում է կազմակերպության խորհրդի ղեկավարին:

Համայնքային կազմակերպության խորհրդի ղեկավարը և քարտուղարը չեն կարող միաժամանակ լինել սկզբնական կազմակերպության ղեկավար կամ քարտուղար:

6.6 Համայնքային կազմակերպության խորհրդի հերթական նիստը հրավիրվում է կազմակերպության խորհրդի ղեկավարի կողմից՝ առնվազն վեց ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստը՝ կազմակերպության խորհրդի ղեկավարի կամ անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Համայնքային կազմակերպության խորհրդի արտահերթ նիստը հրավիրվում է նախաձեռնողի առաջարկած ժամկետում և օրակարգով:

Համայնքային կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ կազմակերպության խորհրդի ղեկավարի կողմից արտահերթ նիստ չհրավիրելու դեպքում նախաձեռնողներն իրավասու են ինքնուրույն հրավիրել արտահերթ նիստը՝ այդ մասին առնվազն երկու օր առաջ տեղյակ պահելով Կուսակցության անմիջական վերադաս մարմնին:

6.7 Համայնքային կազմակերպության խորհուրդը հաշվետու է Կուսակցության վերադաս մարմիններին և գործում է համապատասխան տարածքային կազմակերպության անմիջական ենթակայության տակ:

6.8 Համայնքային կազմակերպության խորհուրդը, յուրաքանչյուր տարվա հունվար-փետրվար ամիսներին, ամփոփելով իր ենթակայության տակ գործող սկզբնական կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, Կուսակցության իր անմիջական վերադաս մարմնի հաստատմանն է ներկայացնում իր գործունեության տարեկան հաշվետվությունը և աշխատանքային ծրագիրը:

6.9 Համայնքային կազմակերպության խորհուրդը՝

ա) համակարգում և վերահսկում է իր ենթակայության տակ գործող սկզբնական կազմակերպությունների գործունեությունը,

բ) հաստատում է իր ենթակայության տակ գործող սկզբնական կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը,

զ) իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները,

դ) մասնակցում է Կուսակցության վերադաս մարմինների կազմակերպած միջոցառումներին,

ե) մշտական կապ է պահպանում իր ենթակայության տակ գործող սկզբնական կազմակերպությունների հետ,

զ) Կուսակցության վերադաս մարմիններին տեղեկատվություն է տրամադրում կազմակերպության գործունեության տարածքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ և կարող է հանդես գալ առաջարկություններով ու Կուսակցության գործունեությանն առնչվող նախաձեռնություններով,

է) կատարում է Կուսակցության վերադաս մարմինների հանձնարարականները:

## **7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ**

7.1 Կուսակցության տարածքային կազմակերպությունները ստեղծվում (կազմալուծվում) են Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կողմից երկու տարի ժամկետով և համակարգում են համապատասխան տարածքներում ստեղծված համայնքային, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սկզբնական կազմակերպությունների գործունեությունը:

7.2 Տարածքային կազմակերպության ղեկավար մարմինը կազմակերպության խորհուրդն է, որի անդամներն ընտրվում են համապատասխան տարածքային կազմակերպության կոնֆերանսի կողմից: Տարածքային կազմակերպության խորհրդի անդամների նվազագույն քանակը, ինչպես նաև կազմակերպության գործունեության տարածքը սահմանում է Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինը:

7.3 Տարածքային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է խորհրդի նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման միջոցով:

7.4 Տարածքային կազմակերպության խորհուրդն ընտրում է կազմակերպության խորհրդի ղեկավար և քարտուղար՝ երկու տարի ժամկետով: Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել կողմ ձայներ ստացած թեկնածուն: Տարածքային կազմակերպության խորհրդի որոշմամբ կարող են կատարվել կազմակերպության խորհրդի ղեկավարի և քարտուղարի վաղաժամկետ ընտրություններ:

7.5 Տարածքային կազմակերպության խորհրդի ղեկավարը պատասխանատու է կազմակերպության ընդհանուր գործունեության, իսկ քարտուղարը՝ կազմակերպության գործավարության համար, և անհրաժեշտության դեպքում փոխարինում է կազմակերպության խորհրդի ղեկավարին:

Տարածքային կազմակերպության խորհրդի ղեկավարը և քարտուղարը չեն կարող միաժամանակ լինել սկզբնական կամ համայնքային կազմակերպության ղեկավար կամ քարտուղար:

7.6 Տարածքային կազմակերպության խորհրդի հերթական նիստը հրավիրվում է կազմակերպության խորհրդի ղեկավարի կողմից՝ առնվազն վեց ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստը՝ կազմակերպության խորհրդի ղեկավարի կամ անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Տարածքային կազմակերպության խորհրդի արտահերթ նիստը հրավիրվում է նախաձեռնողի առաջարկած ժամկետում և օրակարգով:

Տարածքային կազմակերպության խորհրդի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ կազմակերպության խորհրդի ղեկավարի կողմից արտահերթ նիստ չհրավիրելու դեպքում նախաձեռնողներն իրավասու են ինքնուրույն հրավիրել արտահերթ նիստը՝ այդ մասին առնվազն երկու օր առաջ տեղյակ պահելով Կուսակցության անմիջական վերադաս մարմնին:

7.7 Տարածքային կազմակերպության խորհուրդը հաշվետու է Կուսակցության վերադաս մարմիններին և գործում է Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի անմիջական ենթակայության տակ:

7.8 Տարածքային կազմակերպության խորհուրդը, յուրաքանչյուր տարվա փետրվար-մարտ ամիսներին, ամփոփելով իր ենթակայության տակ գործող համայնքային (սկզբնական) կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի

հաստատմանն է ներկայացնում իր գործունեության տարեկան հաշվետվությունը և աշխատանքային ծրագիրը:

7.9 Տարածքային կազմակերպության խորհուրդը՝

ա) համակարգում և վերահսկում է իր ենթակայության տակ գործող համայնքային (սկզբնական) կազմակերպությունների գործունեությունը,

բ) հաստատում է իր ենթակայության տակ գործող համայնքային (սկզբնական) կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը,

գ) իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները,

դ) մասնակցում է Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կազմակերպած միջոցառումներին,

ե) մշտական կապ է պահպանում իր ենթակայության տակ գործող համայնքային (սկզբնական) կազմակերպությունների հետ,

զ) Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնին տեղեկատվություն է տրամադրում կազմակերպության գործունեության տարածքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ և կարող է հանդես գալ առաջարկություններով ու Կուսակցության գործունեությանն առնչվող նախաձեռնություններով,

է) կատարում է Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի հանձնարարականները:

**8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

8.1 Կուսակցության քաղաքական խորհուրդը Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինն է, որը ձևավորվում (կազմալուծվում) է Կուսակցության համագումարի կողմից և համակարգում է Կուսակցության տարածքային կազմակերպությունների, այլ պետություններում ստեղծված ներկայացուցչությունների,

ինչպես նաև Կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը:

8.2 Կուսակցության քաղաքական խորհրդի անդամների քանակը սահմանում է Կուսակցության համագումարը: Կուսակցության քաղաքական խորհրդի անդամներն ընտրվում են Կուսակցության համագումարի կողմից՝ երկու տարի ժամկետով, համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

8.3 Կուսակցության քաղաքական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

ա) սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ,

բ) Կուսակցության համագումարի որոշմամբ,

գ) Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ՝ սույն Կանոնադրության 10.11 կետով նախատեսված դեպքերում,

դ) Կուսակցությունից քաղաքական խորհրդի անդամի դուրս գալու կամ հեռացվելու դեպքերում,

ե) Կուսակցության քաղաքական խորհրդի անդամի դիմումի համաձայն,

զ) օրենսդրությամբ սահմանված կարգով Կուսակցության քաղաքական խորհրդի անդամին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում,

է) Կուսակցության քաղաքական խորհրդի անդամի մահվան կապակցությամբ:

8.4 Կուսակցության քաղաքական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է խորհրդի նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և Կուսակցության համագումարի որոշումների կատարման միջոցով:

8.5 Կուսակցության քաղաքական խորհուրդը ղեկավարում է Կուսակցության նախագահը, որն ի պաշտոնե հանդիսանում է Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահը, և պատասխանատու է Կուսակցության ընդհանուր գործունեության, Կուսակցության գաղափարական, քաղաքական և ծրագրային դրույթների կենսագործման համար:

8.6 Կուսակցության քաղաքական խորհուրդն ընտրում է քաղաքական խորհրդի քարտուղար՝ երկու տարի ժամկետով, որը պատասխանատու է Կուսակցության կազմակերպական աշխատանքների համակարգման և գործավարության համար: Եթե առաջադրվել են Կուսակցության քաղաքական խորհրդի քարտուղարի մեկից ավելի

թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել կողմ ձայներ ստացած թեկնածուն: Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ կարող է կատարվել քաղաքական խորհրդի քարտուղարի վաղաժամկետ ընտրություն:

8.7 Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահը, քաղաքական խորհրդի անդամների թվից, առաջարկում է Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի տեղակալի թեկնածու, որը նշանակվում է Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ: Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի տեղակալը անհրաժեշտության դեպքում փոխարինում է Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահին, կատարում է նրա հանձնարարականները և իրականացնում քաղաքական խորհրդի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ: Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահը, սույն կանոնադրության 10.11 կետով նախատեսված դեպքերում, կարող է առաջարկել քաղաքական խորհրդին դադարեցնել քաղաքական խորհրդի տեղակալի լիազորությունները և ներկայացնել քաղաքական խորհրդի նախագահի տեղակալի նոր թեկնածու՝ քաղաքական խորհրդի անդամների թվից:

Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահը, նրա տեղակալը և քարտուղարը չեն կարող միաժամանակ լինել տարածքային, համայնքային կամ սկզբնական կազմակերպության ղեկավար կամ քարտուղար:

8.8 Անհրաժեշտության դեպքում Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել նաև քաղաքական խորհրդի ընտրովի կամ նշանակովի այլ պաշտոններ (Կուսակցության քաղաքական խորհրդի պատվավոր անդամներ, առանձին ոլորտների կամ հարցերի քաղաքական խորհրդի պատասխանատուներ, խորհրդականներ և այլն), որոնք իրականացնում են Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից իրենց վերապահված լիազորություններ:

8.9 Կուսակցության քաղաքական խորհրդի հերթական նիստը հրավիրվում է քաղաքական խորհրդի նախագահի կողմից՝ առնվազն երկու ամիսը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստը՝ քաղաքական խորհրդի նախագահի կամ անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Կուսակցության քաղաքական խորհրդի արտահերթ նիստը հրավիրվում է նախաձեռնողի առաջարկած ժամկետում և օրակարգով:

8.10 Կուսակցության քաղաքական խորհուրդը, Կուսակցության գործունեությանը վերաբերող որոշ հարցերի քննարկման նպատակով, իր որոշմամբ կարող է անցկացնել

քաղաքական խորհրդի ընդլայնված նիստ: Կուսակցության քաղաքական խորհրդի ընդլայնված նիստի՝ քաղաքական խորհրդի մշտական անդամ չհանդիսացող մասնակիցների ցանկը հաստատում է Կուսակցության քաղաքական խորհուրդը՝ ընդլայնված նիստ հրավիրելու մասին որոշմամբ: Կուսակցության քաղաքական խորհրդի մշտական անդամ չհանդիսացող անձինք քաղաքական խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով և չեն մասնակցում որոշումների ընդունման նպատակով անցկացվող քվեարկություններին:

Կուսակցության քաղաքական խորհրդի այն նիստին, որտեղ կատարվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում Կուսակցության պատգամավորության թեկնածուների առաջադրումը, մասնակցում են Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

8.11 Կուսակցության քաղաքական խորհուրդը հաշվետու է Կուսակցության համագումարին:

8.12 Կուսակցության քաղաքական խորհուրդը, յուրաքանչյուր տարվա մարտին, ամփոփելով տարածքային կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները, հաստատում է առաջիկա տարվա իր աշխատանքային ծրագիրը:

8.13 Կուսակցության քաղաքական խորհուրդը՝

ա) Կուսակցության անունից իրականացնում է նրա՝ որպես իրավաբանական անձի լիազորությունները,

բ) համակարգում և վերահսկում է տարածքային կազմակերպությունների գործունեությունը,

գ) հաստատում է Կուսակցության տարածքային կազմակերպությունների տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը,

դ) իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները,

ե) պատրաստում և Կուսակցության համագումարի հաստատմանն է ներկայացնում համագումարների միջև ընկած ժամանակահատվածում իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունը,

զ) հրավիրում է Կուսակցության հերթական կամ արտահերթ համագումար, կազմակերպում է համագումարների հրավիրման նախապատրաստական աշխատանքները կամ այդ նպատակով ստեղծում է կազմակերպական կոմիտե,



ե) վերահսկում է Կուսակցության համագումարի և իր որոշումների կատարումը,

ը) մշակում է Կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերը, Կուսակցության մարտավարական սկզբունքները, Կուսակցության անունից կատարում է հայտարարություններ և առաջարկություններ,

թ) համակարգում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված Կուսակցության անդամների գործունեությունը,

ժ) կազմում է հանձնաժողովներ և հանձնախմբեր, Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի ներկայացմամբ հաստատում է հանձնաժողովների նախագահների թեկնածությունները,

ժա) համակարգում է Կուսակցության լրատվամիջոցների և հրատարակչական ծառայությունների գործունեությունը (եթե այդպիսիք առկա են),

ժբ) իր նախաձեռնությամբ կամ Կուսակցության տարածքային կազմակերպության առաջարկությամբ ստեղծում (կազմալուծում) է Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները, ինչպես նաև այլ պետություններում Կուսակցության ներկայացուցչությունները,

ժգ) կիրառում է կարգապահական տույժեր և խրախուսանքի միջոցներ,

ժդ) հաստատում է Կուսակցության ղեկավար մարմինների, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունների և աշխատանքային ծրագրերի օրինակելի ձևերը,

ժե) հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով թեկնածուներ առաջադրելու մասին ցուցակը, Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրվող, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մյուս մարմինների ընտրովի, ինչպես նաև քաղաքական կամ քաղաքացիական նշանակովի պաշտոններում ընտրվելու (նշանակվելու) նպատակով Կուսակցության կողմից առաջադրվող թեկնածությունները,

ժզ) որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի թեկնածուի առաջադրման կամ առաջադրված որևէ թեկնածություն պաշտպանելու մասին,

ժէ) որոշում է ընդունում առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ դաշինքների կամ միավորումների (այդ թվում՝ ընտրական) ստեղծման կամ դրանց մասնակցության մասին,

ժբ) հաստատում է Կուսակցության նախընտրական ծրագրերը, կարգախոսները և քարոզչական բնույթի մյուս փաստաթղթերն ու նյութերը,

ժթ) սահմանում է Կուսակցության անդամավճարի չափը,

ժժ) հաստատում է Կուսակցության գույքի կառավարման կարգը և դրամական ծախսերի նախահաշիվը,

ի) իրականացնում է սույն կանոնադրությամբ և Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

## **9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ**

9.1 Կուսակցության համագումարը Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինն է, որն ունի Կուսակցության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում ընդունելու իրավունք, և որի ընդունած որոշումները պարտադիր են Կուսակցության բոլոր մարմինների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների, ներկայացուցչությունների և անդամների համար:

9.2 Կուսակցության հերթական համագումարները հրավիրվում են երկու տարին մեկ անգամ: Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ կարող է հրավիրվել Կուսակցության արտահերթ համագումար: Հերթական համագումարի հրավիրումից առնվազն մեկ ամիս առաջ Կուսակցության քաղաքական խորհուրդը հրավիրում է հատուկ նիստ, որտեղ քննարկվում է համագումարի օրակարգի նախագիծը:

9.3 Կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թիվը, Կուսակցության սկզբնական կազմակերպության պատվիրակների թվի և այդ կազմակերպության անդամների ընդհանուր թվի համամասնությունը, ինչպես նաև ի պաշտոնե համագումարի պատվիրակ հանդիսացող Կուսակցության անդամների ցանկը որոշում է Կուսակցության քաղաքական խորհուրդը: Կուսակցության սկզբնական կազմակերպությունների պատվիրակներն առաջադրվում և ընտրվում են

սկզբնական կազմակերպությունների ժողովներում՝ հերթական համագումարի հրավիրման օրից առնվազն քառասուն, իսկ արտահերթ համագումարի հրավիրման օրից՝ առնվազն տասն օր առաջ:

9.4 Կուսակցության համագումարը՝

ա) լսում և հաստատում է համագումարների միջև ընկած ժամանակահատվածում Կուսակցության գործունեության վերաբերյալ Կուսակցության քաղաքական խորհրդի հաշվետվությունը,

բ) քննարկում և ընդունում է Կուսակցության ծրագիրը և հաստատում կանոնադրությունը, դրանց մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծերը,

գ) ընտրում է Կուսակցության նախագահ և Կուսակցության քաղաքական խորհրդի անդամներ,

դ) ընտրում է Կուսակցության վերստուգիչ հանձնաժողով,

ե) լսում և հաստատում է Կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը,

զ) որոշում է Կուսակցության ռազմավարական, գաղափարական-քաղաքական ուղին, Կուսակցության խնդիրների իրականացման գործելակերպը,

է) որոշում է ընդունում Կուսակցության վերակազմակերպման կամ Կուսակցության լուծարման մասին,

ը) քննարկում և վերջնական որոշում է կայացնում Կուսակցության գործունեության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ:

9.5 Կուսակցության համագումարն իրավագոր է, եթե ներկա են (գրանցված են) համագումարի պատվիրակների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

9.6 Համագումարի որոշումները, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են բաց կամ գաղտնի քվեարկությամբ, համագումարին ներկա (գրանցված) պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

Գաղտնի քվեարկությունն անցկացվում է համագումարին ներկա (գրանցված) պատվիրակների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

9.7 Կուսակցության կանոնադրության և ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Կուսակցության վերակազմակերպման, լուծարման, ինչպես նաև օրենքով կամ սույն կանոնադրությամբ նախատեսված

դեպքերում որոշումներն ընդունվում են Կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

9.8 Կուսակցության համագումարը, Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկման նպատակով, ընտրում է Կուսակցության վերստուգիչ հանձնաժողով, որի անդամների թիվը հաստատում է համագումարը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել Կուսակցության ղեկավար մարմինների անդամ, Կուսակցության տարածքային ստորաբաժանման ղեկավար կամ քարտուղար:

9.9 Կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ: Կուսակցության վերստուգիչ հանձնաժողովը գործում է Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակում և հաշվետու է միայն համագումարին:

9.10 Կուսակցության համագումարը, գրանցված պատվիրակների ձայների մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով ընտրում է Կուսակցության նախագահ: Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա ընտրված է համարվում առավել կողմ ձայներ ստացած թեկնածուն: Համագումարի որոշմամբ Կուսակցության նախագահի վաղաժամկետ ընտրություն կարող է կատարվել համագումարի պատվիրակների ընդհանուր թվի 2/3-ի կողմ ձայներով ընդունված որոշմամբ:

9.11 Կուսակցության նախագահը՝

ա) իրականացնում է Կուսակցության և նրա քաղաքական խորհրդի գործունեության ղեկավարումը,

բ) ներկայացնում է Կուսակցությունը, նրա շահերը և դիրքորոշումը պետական մարմինների, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպությունների, միությունների ու ասոցիացիաների հետ ունեցած հարաբերություններում, կամ այդ նպատակով լիազորում է Կուսակցության այլ անդամների,

գ) ղեկավարում է Կուսակցության քաղաքական խորհրդի աշխատանքները և համակարգում Կուսակցության բոլոր ստորաբաժանումների գործունեությունը,

դ) տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները,

ե) հաստատում (ստորագրում) է Կուսակցության քաղաքական խորհրդի որոշումները,

զ) հաստատում և օրենքով սահմանված կարգով ու ժամկետում պետական լիազոր մարմինն ներկայացնում է Կուսակցության ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունները,

է) օրենքով սահմանված ժամկետում զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում է Կուսակցության ֆինանսական և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները,

ը) առաջարկում է Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահի տեղակալի թեկնածությունը,

թ) իրականացնում է սույն կանոնադրությամբ և Կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:

## **10. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

10.1 Կուսակցության անդամ կարող են լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև ընտրական իրավունքով օժտված այն անձինք (առանց Կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի), ովքեր ընդունում են Կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, չեն հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ:

10.2 Կուսակցության անդամ չեն կարող լինել՝

ա) օտարերկրյա քաղաքացիները,

բ) քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) այն անձինք, որոնք «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ:

10.3 Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անհատական կարգով, անձնական դիմումի համաձայն՝

ա) Կուսակցության տարածքային կազմակերպության խորհրդի որոշմամբ,

բ) Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ:

10.4 Կուսակցության անդամն անդամակցում է Կուսակցության որևէ տարածքային կազմակերպության և հաշվառվում այդ կազմակերպությունում:

10.5 Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով կուսակցությանն անդամակցությունն անթույլատրելի է դառնում, ապա այն կասեցվում է Կուսակցության անդամի դիմումի հիման վրա և (կամ) Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ: Կասեցման վերացումը կատարվում է նույն կարգով:

10.6 Կուսակցության անդամն իրավունք ունի՝

ա) ընտրել և ընտրվել Կուսակցության ղեկավար մարմինների անդամ (այդ թվում՝ տվյալ մարմինների պատվիրակ, նախագահ, ղեկավար կամ քարտուղար), տարածքային և (կամ) կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար մարմինների անդամ (այդ թվում՝ տվյալ մարմինների նախագահ, ղեկավար կամ քարտուղար) կամ վերահսկողություն իրականացնող մարմինների անդամ՝ բացառությամբ սույն կանոնադրության 10.8 կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքից,

բ) ընդգրկվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով թեկնածուներ առաջադրելու մասին ցուցակում, առաջադրվել որպես Կուսակցության թեկնածու՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մյուս մարմինների ընտրովի, քաղաքական կամ քաղաքացիական նշանակովի պաշտոններում ընտրվելու (նշանակվելու) նպատակով՝ բացառությամբ սույն կանոնադրության 10.8 կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքից,

գ) Կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակության կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ,

դ) մասնակցել այն ժողովին կամ նիստին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ,

ե) կասեցնել և վերականգնել Կուսակցությանն իր անդամությունը,

զ) իր դիմումի համաձայն դուրս գալ Կուսակցությունից,

է) օգտվել սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

10.7 Կուսակցության անդամը պարտավոր է՝

- ա) գործել Կուսակցության կանոնադրության շրջանակներում,
- բ) կատարել Կուսակցության համագումարի և վերադաս մարմինների որոշումները,
- գ) մասնակցել կուսակցական իր կազմակերպության ժողովներին և միջոցառումներին,
- դ) պահպանել կուսակցության անդամների համար օրենքով նախատեսված սահմանափակումները և կատարել սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

10.8 Կուսակցության անդամն իրավունք չունի՝

- ա) ընտրվել Կուսակցության, նրա տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում կամ առաջադրվել որպես Կուսակցության թեկնածու՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովի, ինչպես նաև քաղաքական կամ քաղաքացիական նշանակովի պաշտոններում ընտրվելու (նշանակվելու) նպատակով՝ եթե չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի,
- բ) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած իր ծառայողական (պաշտոնեական) դիրքն օգտագործել հոգուտ կուսակցական շահերի:

Կուսակցության քաղաքական խորհրդի որոշմամբ Կուսակցության անդամների համար կարող են սահմանվել նաև Կուսակցության, նրա տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի այլ սահմանափակումներ:

10.9 Կուսակցության անդամի համար Կուսակցությանն անդամակցությունը դադարում է՝

- ա) նրա դիմումի համաձայն Կուսակցությունից դուրս գալու դեպքում,
- բ) Կուսակցությունից նրա հեռացվելու դեպքում,
- գ) սույն կանոնադրության 15.6 կետի հիմքով,
- դ) նրա մահվան կապակցությամբ,
- ե) Կուսակցության լուծարման կապակցությամբ:

10.10 Կուսակցական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար Կուսակցության անդամի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները՝

- ա) շնորհակալության հայտարարում,
- բ) կարգապահական տույժի հանում,
- գ) միանվագ դրամական պարգևատրում,
- դ) հուշանվերով պարգևատրում:

10.11 Կուսակցության կանոնադրության պահանջները կամ վերադաս մարմինների որոշումները չկատարելու, Կուսակցության անդամին ոչ վայել վարքագիծ դրսևորելու, Կուսակցության պատիվը և բարի համբավն արատավորելու, քրեորեն հետապնդելի արարք կատարելու, կուսակցական հանձնարարություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից նախատեսված այլ դեպքերում Կուսակցության անդամի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական հետևյալ տույժերը՝

- ա) նախազգուշացում,
- բ) նկատողություն,
- գ) խիստ նկատողություն,

դ) Կուսակցության քաղաքական խորհրդի, տարածքային, համայնքային և սկզբնական կազմակերպությունների ղեկավար մարմինների անդամության դադարեցում,

- ե) Կուսակցությունից հեռացում:

10.12 Կուսակցության անդամների նկատմամբ խրախուսանքի տեսակների և կարգապահական տույժերի կիրառման կարգը սահմանում է Կուսակցության քաղաքական խորհուրդը:

## **11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ**

11.1 Կուսակցության անդամների հաշվառումն իրականացնում են՝

- ա) տարածքային կազմակերպության խորհրդի քարտուղարը,
- բ) Կուսակցության քաղաքական խորհրդի քարտուղարը:



11.2 Կուսակցության անդամների հաշվառման նպատակով տարածքային կազմակերպություններում բացվում են Կուսակցության անդամների հաշվառման անձնական քարտեր, որտեղ գրանցվում են Կուսակցության անդամի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

ա) հաշվառման հերթական համարը և գրանցման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը,

բ) անունը, ազգանունը և հայրանունը,

գ) տարիքը (ծննդյան ամիսը, ամսաթիվը և տարեթիվը) և սեռը,

դ) մշտական բնակության վայրի հասցեն և հեռախոսահամարները,

ե) կրթությունը,

զ) աշխատանքի վայրը,

է) Կուսակցության տարածքային այն կազմակերպության անվանումը, որտեղ հաշվառված է Կուսակցության տվյալ անդամը,

ը) ըստ հայեցողության լրացուցիչ այլ տեղեկություններ:

11.3 Կուսակցության անդամի հաշվառման քարտում համապատասխան տեղեկությունները գրանցվում են Կուսակցությանն անդամակցության պահից 7-օրյա ժամկետում:

11.4 Կուսակցության տարածքային կազմակերպությունների խորհուրդների քարտուղարները Կուսակցության անդամների հաշվառման տարածքային գրանցամատյանների տվյալները (էլեկտրոնային կրիչների վրա), դրանց գրանցման պահից 10-օրյա ժամկետում, փոխանցում են Կուսակցության քաղաքական խորհրդի քարտուղարին, որը ձևավորում է Կուսակցության անդամների հաշվառման ընդհանուր գրանցամատյանը:

11.5 Կուսակցության անդամի հաշվառման քարտում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու, ինչպես նաև նոր անդամների անդամակցության, անդամության կասեցման կամ դադարեցման դեպքերում կուսակցության անդամների հաշվառման տարածքային և ընդհանուր գրանցամատյաններում նույն կարգով կատարվում են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

**12. ԸՆՏՐՈՎԻ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԿԱՆՉԻ ԿԱՐԳԸ**

12.1 Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովի, ինչպես նաև քաղաքական կամ քաղաքացիական նշանակովի պաշտոններում ընտրվելու (նշանակվելու) նպատակով Կուսակցության թեկնածուներ կարող են առաջադրվել Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ և (կամ) Կուսակցության ղեկավար մարմինների առաջարկությամբ:

12.2 Հանրապետության Նախագահի թեկնածու կարող է առաջադրվել կամ առաջադրված որևէ թեկնածուի պաշտպանության օգտին որոշում կարող է կայացվել Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից:

12.3 Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից հաստատված թեկնածությունների հետևանքը կատարվում է նույն կարգով:

### **13. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

13.1 Ներկուսակցական վեճերը լուծվում են վերադասության կարգով: Եթե վեճի կողմերից մեկը համաձայն չէ վերադաս մարմնի կայացրած որոշման հետ, ապա այդ որոշումը նա կարող է բողոքարկել Կուսակցության քաղաքական խորհրդում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Կուսակցության համագումարում:

13.2 Կուսակցության համագումարում կարող են բողոքարկվել միայն Կուսակցության գաղափարախոսության, հայացքների ու տեսակետների, ծրագրի և կանոնադրության, ինչպես նաև ընտրովի պաշտոններում Կուսակցության թեկնածուների հետ կապված որոշումները:

13.3 Վերադասության կարգով որոշման բողոքարկումը վեճի կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունների կատարումից:

### **14. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

14.1 Կուսակցության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, նվիրատվություններից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

14.2 Կուսակցության կողմից ստացված, ինչպես նաև նրա սեփական միջոցների հաշվին ստեղծված և (կամ) ձեռք բերված գույքի սեփականատերը Կուսակցությունն է:

14.3 Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի Կուսակցությանը պատկանող գույքի կամ դրա մասի նկատմամբ և պատասխանատվություն չի կրում Կուսակցության պարտավորությունների համար: Կուսակցությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար:

14.4 Կուսակցության ղեկավար մարմինները, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները Կուսակցության կողմից իրենց հատկացված գույքը տիրապետում և օգտագործում են Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից նախատեսված սահմաններում և կարգով:

14.5 Կուսակցության դրամական միջոցները ձևավորվում են՝

- ա) անդամավճարներից,
- բ) օրենքով նախատեսված նվիրատվություններից,
- գ) օրենքով նախատեսված բյուջետային ֆինանսավորումից,
- դ) քաղաքացիական-իրավական գործարքներից և օրենքով չարգելված այլ

մուտքերից:

14.6 Կուսակցությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, դրամական, փոխադրական միջոցներ և այլ գույք:

14.7 Կուսակցության գույքը և դրամական միջոցները տնօրինում է Կուսակցության նախագահը, իսկ նրա կողմից լիազորված լինելու դեպքում՝ Կուսակցության քաղաքական խորհուրդը և Կուսակցության տարածքային կազմակերպությունների խորհուրդները՝ ըստ Կուսակցության քաղաքական խորհրդի կողմից հաստատված նախահաշվի և կարգի:

## **15. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

15.1 Կուսակցության վերակազմակերպումը և (կամ) լուծարումը կարող է կատարվել Կուսակցության համագումարի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կուսակցությունը կարող է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) միայն այլ կուսակցության (կուսակցությունների):

15.2 Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Կուսակցության քաղաքական խորհուրդը կամ Կուսակցության համագումարի պատվիրակների առնվազն 1/3-ը՝ գրավոր առաջարկով:

15.3 Կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման մասին որոշումն ընդունվում է Կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

15.4 Համագումարի կողմից Կուսակցության վերակազմակերպման մասին որոշում ընդունելու դեպքում ստեղծվում է ժամանակավոր հանձնաժողով, որն իրականացնում է Կուսակցության վերակազմակերպման հետ կապված և համագումարի որոշմամբ նախատեսված աշխատանքները:

15.5 Համագումարի կողմից Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելու դեպքում ստեղծվում է լուծարման հանձնաժողով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կուսակցության գույքը և դրամական միջոցները, ինչպես նաև իրականացնում է Կուսակցության լուծարման հետ կապված աշխատանքները: Այս դեպքում Կուսակցության լուծարումից հետո մնացած գույքը Կուսակցության համագումարի որոշմամբ փոխանցվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի կամ Հայաստանի Հանրապետությանը:

15.6 Կուսակցության լուծարման նախաձեռնությունը համագումարի կողմից մերժվելու դեպքում, այդ մասին որոշման ընդունման պահից, դադարեցվում է լուծարման նախաձեռնությամբ հանդես եկած Կուսակցության անդամների անդամակցությունը և անհրաժեշտության դեպքում կատարվում են նոր ընտրություններ:

15.7 Կուսակցությունը ենթակա է լուծարման նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

*Հավելված 1*  
*«Բարգավաճ Հայաստան Կուսակցության»*  
*կանոնադրության*

**«Բարգավաճ Հայաստան Կուսակցության» խորհրդանշանի գունավոր պատկերը**



*Հավելված 2*  
*«Բարգավաճ Հայաստան Կուսակցության»*  
*կանոնադրության*

**«Բարգավաճ Հայաստան Կուսակցության» դրոշի գունավոր պատկերը**

